

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությունից հանել «ոստիկանության միևնույն ստորաբաժանման ներսում» բառերը:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերությունում «հաստատություններում առկա ուսուցման ձևով սովորող» բառերը փոխարինել «հաստատություններում պետական պատվերի շրջանակներում սովորող (այսուհետ՝ սովորող)» բառերով:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի «4-րդ կամ 5-րդ կետերով նախատեսված որոշումների» բառերը փոխարինել «5-րդ կետով նախատեսված որոշման» բառերով:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 11. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող պահանջները

1. Անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան այն քաղաքացին, ով՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների և «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով, 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի),

2) իր անձնական հատկանիշներով, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները:

2. Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում պաշտոնի կարող են նշանակվել «Ոստիկան» և «Ոստիկան սպա» մասնագիտական որակավորում չունեցող քաղաքացիները՝ վերապատրաստման արդյունքներով: Այդ մասնագիտությունների, մասնագիտական կրթության որակավորման աստիճանների և պաշտոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ոստիկանության ծառայողին ներկայացվող ֆիզիկական պատրաստականության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

1) ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ով դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից.

3) ով դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար.

4) ով դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

5) ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված անձնական հատկանիշները կարող են ստուգվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

5. Ոստիկանությունում ծառայության անցնող քաղաքացիները, ինչպես նաև ոստիկանության ծառայողները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով անցնում են հոգեֆիզիոլոգիական հետազոտություն, թեստավորում՝ ակոհոլիզ, թմրամիջոցներից և հոգեմետ նյութերից կախվածությունը ստուգելու նպատակով:

6. Ոստիկանությունում ծառայության անցնելու համար պահանջվող փաստաթղթերի ցանկը և ոստիկանությունում ծառայության անցնելու հետ կապված որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասից «առկա ուսուցման ձևով» բառերը հանել:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասից հանել «փորձաշրջան անցնելու,» բառերը:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածի՝

1. 2-րդ մասում «գլխավոր խմբի պաշտոն և ունի» բառերը փոխարինել «գլխավոր խմբի պաշտոն, ունի «Ոստիկանության մագիստրոս» կամ «Իրավագիտության մագիստրոս» որակավորմամբ մասնագիտական կրթություն և» բառերով:

2. 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք ունեն «Ոստիկանության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն, մինչև նշանակումը մեկ տարի զբաղեցրել են ոստիկանության գլխավոր խմբի այլ պաշտոն կամ երեք տարի՝ ոստիկանության ավագ խմբի պաշտոն, իսկ պետական կառավարման մարմնի ղեկավարի որոշմամբ՝ մինչև սահմանված ժամկետը լրանալը:

Ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններում բացառիկ դեպքերում կարող են նշանակվել նաև այն ծառայողները, որոնք մինչև նշանակումը ութ տարի զբաղեցրել են ոստիկանության միջին խմբի պաշտոն, որից առնվազն վերջին երեք տարին՝ բաժանմունքի պետի տեղակալի կամ հատկապես կարևոր հանձնարարություններով ավագ տեսուչի, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչի, հատկապես կարևոր գործերով ավագ օպերաիվագործի պաշտոններ:

Ոստիկանության գլխավոր խմբի պաշտոններում կարող է նշանակվել նաև ոստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցրած ծառայողը:

Ոստիկանության ավագ խմբի պաշտոններում կարող են նշանակվել այն ծառայողները, որոնք ունեն «Ոստիկանության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն, մինչև նշանակումը վերջին մեկ տարին զբաղեցրել են ոստիկանության ավագ խմբի այլ պաշտոն կամ հինգ տարի՝ ոստիկանության միջին խմբի պաշտոն:

Քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ, քննչական վարչության պետ, քննչական բաժնի պետ, քննչական բաժնի պետի տեղակալ, քննչական բաժանմունքի պետ, քննչական բաժանմունքի պետի տեղակալ, հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, ավագ քննիչ, քննիչ պաշտոններում կարող են նշանակվել միայն «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացիները:»:

3. 4-րդ մասից հանել «ատեստավորման արդյունքում» բառերը:

4. 5-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

5. 6-րդ, 7-րդ և 8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Հայաստանի Հանրապետության ոստիկանության ուսումնական հաստատությունն ավարտած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները պաշտոնի են նշանակվում արտամրցութային կարգով:

7. Ոստիկանության միջին խմբի պաշտոններում կարող են նշանակվել «Ոստիկան-սպա» որակավորմամբ մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացիները:

8. Ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում կարող են նշանակվել «Ոստիկան» որակավորմամբ մասնագիտական կրթություն ունեցող քաղաքացիները:».

6. 9-րդ մասը ճանաչել ուժը կորցրած.

7. 10-րդ մասի`

1) 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ծառայության կարող են նշանակվել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, դատախազները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից պետական այլ մարմիններում պաշտոնի նշանակված ոստիկանության նախկին ծառայողները, ինչպես նաև վերջին 5 տարիների ընթացքում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) նախկին ծառայողները:».

2) 4-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ոստիկանության ծառայողի կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակավոր անհնարինության, կին ծառայողի հղիության կամ ծննդաբերության, ինչպես նաև ծառայողի` մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդի, ոստիկանության ծառայողի լիազորությունները ժամանակավորապես կասեցվելու դեպքերում նրա պաշտոնը կարող է զբաղեցվել` ոստիկանության այլ փոխարինող ծառայողին կամ ոստիկանության կադրերի ռեզերվում գտնվող ոստիկանության ծառայողին կամ ոստիկանությունում ծառայության անցնող անձին տվյալ պաշտոնին ժամանակավոր նշանակելով:».

3) 5-րդ պարբերությունից հանել «առաջին» բառը.

8. 11-րդ մասից հանել «, ոստիկանի և տեսուչի (դրանց հավասարեցված) պաշտոններն առաջին անգամ ծառայության անցնող անձանցով համալրելու դեպքում` 6 ամսվա ընթացքում» բառերը:

Հոդված 8. Օրենքի 14-րդ հոդվածից հետո լրացնել նոր` 14.1 հոդված հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 14.1. Ոստիկանությունում թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում թափուր պաշտոն առաջանալու դեպքում ոստիկանության ծառայողների պաշտոնի նշանակումը կատարվում է մրցույթի արդյունքներով, որի անցկացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ոստիկանությունում թափուր պաշտոն առաջանալու դեպքում մրցույթին կարող են մասնակցել նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողները, դատախազները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից պետական այլ մարմիններում պաշտոնի

նշանակված ոստիկանության նախկին ծառայողները, ինչպես նաև վերջին 5 տարիների ընթացքում ծառայությունից ազատված (բացառությամբ սույն օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի հիմքով) նախկին ծառայողները: Մրցույթի արդյունքում պաշտոնի նշանակվելուց հետո վերապատրաստումը պարտադիր է:

3. Եթե ոստիկանությունում թափուր պաշտոն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար սահմանված ժամկետում ոչ ոք չի դիմել, կամ դիմողներից ոչ մեկը մրցույթին չի ներկայացել, կամ մրցույթի արդյունքում ոչ ոք հաղթող չի ճանաչվել, ապա տվյալ թափուր պաշտոնում նշանակումը կատարում է պետական կառավարման մարմնի ղեկավարը՝ սույն օրենքով սահմանված կարգով:

4. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված թեկնածուն պաշտոնի է նշանակվում մրցույթի արդյունքները հայտարարելուց հետո 5-օրյա ժամկետում:»:

Հոդված 9. Օրենքի 15-րդ հոդվածի՝

1. 1-3-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած.

2. 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ոստիկանության ծառայողի ատեստավորումն անցկացվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի պատճառաբանված որոշման հիման վրա, բայց ոչ ավել, քան տարին մեկ անգամ:»:

3. 6-րդ մասի՝

1) 1-ին և 3-րդ կետերից հանել «, եթե նրանք նման ցանկություն չեն հայտնել» բառերը.

2) 2-րդ պարբերությունից հանել «, եթե վերջիններս ցանկություն չեն հայտնել ավելի վաղ ատեստավորվելու համար» բառերը.

3) 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Արձակուրդում, գործուղման մեջ գտնվող կամ ոստիկանության ժամանակավոր անաշխատունակ ծառայողները կարող են ատեստավորվել վերադառնալուց երկու ամիս հետո:».

4. 11-րդ մասի 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերը ճանաչել ուժը կորցրած.

5. 13-րդ մասի՝

1) 1-ին պարբերությունում «մասին համապատասխան ընդունված ատեստավորման հանձնաժողովի որոշումները» բառերը փոխարինել «մասի 5-րդ կետին համապատասխան ընդունված ատեստավորման հանձնաժողովի որոշումը:».

2) 2-րդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 10. Օրենքի 16-րդ հոդվածի՝

1. վերնագրից հանել «(ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ)» բառը.

2. 1-ին մասի՝

1) 1-ին պարբերությունից հանել «(որակավորման)» բառը,

2) 2-րդ պարբերությունից հանել «(որակավորում)» բառը.

3. 2-րդ և 3-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած.

4. 4-րդ մասից հանել «(որակավորում)» բառը:

Հոդված 11. Օրենքի 17-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ոստիկանության ծառայողն իր ցանկությամբ կարող է փոխադրվել այլ պաշտոնի և (կամ) ծառայության այլ վայր՝ ոստիկանության տվյալ պաշտոնում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո, իսկ պետական կառավարման մարմնի ղեկավարի որոշմամբ՝ մինչև սահմանված ժամկետը լրանալը:»:

Հոդված 12. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 1-ին կետից հանել «բացառիկ դեպքերում» բառերը.

2. 2-րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

«2) զբաղեցրած պաշտոնից ոչ ավելի, քան երկու աստիճանով ցածր պաշտոնի, եթե փոխադրումը կապված է կառուցվածքային փոփոխությունների կամ հաստիքների կրճատման հետ.»:

Հոդված 13. Օրենքի 19-րդ հոդվածում լրացնել 12-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12) ոստիկանությունում թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթին մասնակցելը:»:

Հոդված 14. Օրենքի 27-րդ հոդվածի՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ոստիկանության ծառայողի համազգեստը, վկայականը և անձնական գործը».

2. 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս՝

«4. Ոստիկանության ծառայողների վերաբերյալ վարվում է անձնական գործ, որում արտացոլվում է նրա ծառայողական գործունեության ընթացքը: Անձնական գործի ձևը, վարման կարգը սահմանվում է պետական կառավարման մարմնի ղեկավարի նորմատիվ հրամանով:».

Հոդված 15. Օրենքի 32-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի 3-րդ պարբերությունում «նախաժննդյան և հետժննդյան» և «երեխային խնամելու» բառերը փոխարինել համապատասխանաբար «հղիության և ծննդաբերության» և «մինչև երեք տարեկան երեխայի խնամքի» բառերով.

2. 3-րդ մասում «նախաժննդյան, հետժննդյան և ծառայողի երեխային խնամելու» բառերը փոխարինել «հղիության, ծննդաբերության և ծառայողի՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի» բառերով:

Հոդված 16. Օրենքի 40-րդ հոդվածի՝

1. 1-ին մասի առաջին պարբերությունից հանել «,եռամսյա ուսումնական փորձաշրջան անցնողը» և «, ուսումնական փորձաշրջանի» բառերը, 1-ին մասի 1-ին կետից, 2-րդ մասի առաջին պարբերությունից, 2-րդ մասի 1-ին կետից և 3-րդ մասից հանել համապատասխանաբար «կամ ուսումնական փորձաշրջանը», «կամ ուսումնական փորձաշրջան անցնելու», «կամ ուսումնական փորձաշրջանն», «կամ ուսումնական փորձաշրջանի» բառերը.

2. 2-րդ մասի 1-ին կետի «քան հինգ տարի,» բառերից հետո լրացնել «կամ նախնական մասնագիտական կրթություն ստանալուց» բառերը.

Հոդված 17. Օրենքի 41-րդ հոդվածի՝

1. 7-րդ մասից հանել «, ուսումնական հաստատության տարածքից արտահերթ արձակում» բառերը.

2. 8-րդ մասում «4-րդ կամ 5-րդ կետերով նախատեսված որոշումների» բառերը փոխարինել «5-րդ կետով նախատեսված որոշման» բառերով:

Հոդված 18. Օրենքի 42-րդ հոդվածի՝

1. 1-ին մասից հանել «եթե դրանք չեն պարունակում քրեորեն պատժելի արարքի հատկանիշներ,» բառերը.

2. 1-ին մասի 5-րդ կետում «զգուշացնել պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» բառերը փոխարինել «հայտարարում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին» բառերով.

3. 2-րդ մասից հանել «առկա ուսուցման» բառերը, իսկ 2-րդ կետը ձանաչել ուժը կորցրած.

4. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերով՝

«8) ոստիկանության ծառայողի պատիվն ու արժանապատվությունը արատավորելը կամ նրա նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելը.

9) ծառայողական քննության ընթացքում բժշկական ստուգումից, արյան, մազերի, մարմնի արտաթորությունների նմուշներ հանձնելուց հրաժարվելը կամ ամենամյա կանխարգելիչ բժշկական քննությունից խուսափելը.

10) ղեկավարի (ուղղակի կամ անմիջական) իրավասության սահմաններում տրված հրամանները, ցուցումները, հանձնարարականները երկու կամ ավելի անգամ դիտավորությամբ չկատարելը:»:

Հոդված 19. Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1. կետ՝

«2.1) հաստիքների կրճատման, ստորաբաժանման լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե ոստիկանության ծառայողը զրավոր հրաժարվում է այլ պաշտոնի նշանակվելուց.».

2. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) նրանց նկատմամբ դատարանի մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու, այդ թվում՝ դատարանի դատավճռով ոչ արդարացման հիմքերով պատժից ազատվելու կամ պատիժը կրելը հետաձգելու դեպքում.».

3. 10-րդ կետում «նախածննդյան, հետծննդյան և երեխային խնամելու» բառերը փոխարինել «հղիության, ծննդաբերության և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի» բառերով.

Հոդված 20. Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի՝

1. 2-րդ կետից հանել «, և հաստիքների կրճատումը պայմանավորված է ոստիկանության հաստիքների ընդհանուր թվի կրճատմամբ» բառերը:

2. 5-րդ կետում «6-րդ կետով սահմանված կարգապահական տույժի» բառերը փոխարինել «5-րդ կամ 6-րդ կետերով սահմանված կարգապահական տույժերի» բառերով.

3. 6-րդ կետում «վեց ամսից» բառերը փոխարինել «վեց ամիս և» բառերով:

Հոդված 21. Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 7-րդ պարբերությունում «,ինչպես նաև 11-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ պարբերությունում նշված մասնագիտությունների ցանկով» բառերը փոխարինել «, ինչպես նաև 11-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8-րդ պարբերությամբ.

«Պետական կառավարման մարմնի ղեկավարի խորհրդականի և պետական կառավարման մարմնի ղեկավարի տեղակալի խորհրդականի պաշտոններ զբաղեցնող ծառայողները կարող են ուստիկանությունում ծառայել մինչև 65 տարին լրանալը»:

Հոդված 22. Օրենքի 49-րդ հոդվածում՝

1. 1-ին մասի 1-ին նախադասությունում «գրանցվում են» բառից հետո լրացնել «սույն օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերով սահմանված կարգապահական տույժի ենթարկված ուստիկանության ծառայողները, ինչպես նաև»:

2. 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ պարբերությամբ.

«Վեց ամիս և ավելի ժամկետով ուսման գործուղված ուստիկանության ծառայողին ուստիկանության կադրերի գործող ռեզերվում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում վճարվում է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված դրամական բավարարում»:

Հոդված 23. Օրենքի 54-րդ հոդվածի 4-րդ մասը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 24. Օրենքի 55-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 55. Ուսուցումը ուստիկանության ուսումնական հաստատությունում

1. Ուստիկանական նախնական և միջին մասնագիտական կրթություն ստանալու նպատակով ուստիկանության ուսումնական հաստատություն կարող են ընդունվել առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիները ուստիկանական նախնական և միջին մասնագիտական կրթություն ստանալու նպատակով ուստիկանության ուսումնական հաստատություն կարող են դիմել սույն օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված պահանջները բավարարելու դեպքում:

3. Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում ուստիկանության ուսումնական հաստատություն կարող են ընդունվել նաև օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

4. Ուստիկանության ուսումնական հաստատությունում «Ուստիկանության բակալավր» մասնագիտական որակավորում կարող են ստանալ «Ուստիկան-սպա» մասնագիտական որակավորում ստանալուց հետո ուստիկանությունում ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ ունեցող ուստիկանության ծառայողները:

5. Ուստիկանության ուսումնական հաստատությունում կադրային ստորաբաժանման հայտի հիման վրա ձևավորված պետական պատվերի շրջանակներում «Իրավագիտության բակալավր» մասնագիտական որակավորում կարող են ստանալ սույն օրենքի 11-րդ հոդվածի պահանջները բավարարող և առնվազն միջնակարգ ընդհանուր կրթություն ունեցող քաղաքացիները:

6. Ուստիկանության ուսումնական հաստատությունում «Ուստիկանության մագիստրոս» կամ «Իրավագիտության մագիստրոս» որակավորմամբ մասնագիտական կրթություն կարող են ստանալ «Ուստիկանության բակալավր» կամ «Իրավագիտության բակալավր» որակավորմամբ մասնագիտական կրթություն ստանալուց հետո ուստիկանությունում ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ ունեցող ուստիկանության ծառայողները:

7. Ոստիկանության ուսումնական հաստատությունում դիմորդների ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ պետական կառավարման մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգին համապատասխան:

Ընդունելությունը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկին և տեղերին համապատասխան:

Ոստիկանության ուսումնական հաստատությունում ընդունելությունը կազմակերպվում է պետական պատվերի շրջանակներում, բացառությամբ վճարովի կրթական ծառայություններ իրականացնելու դեպքերի:

8. Ոստիկանության ուսումնական հաստատությունը կարող է իրականացնել նաև վճարովի կրթական ծառայություններ:

9. Ոստիկանության ուսումնական հաստատությունում բարձրագույն և հետբուհական կրթական ծրագրերով իրականացվում է նաև հեռակա ուսուցում ոստիկանության ծառայողների համար: Այդ ծառայողներն ընդունելության քննություններին մասնակցում են մինչև 43 տարեկանը լրանալը՝ ոստիկանությունում առնվազն մեկ տարի ծառայելուց հետո՝ ծառայողի դրական բնութագրի առկայության դեպքում:

10. Ոստիկանության ուսումնական հաստատությունում ոստիկանական միջին, ինչպես նաև կադրային ստորաբաժանման հայտի հիման վրա ձևավորված պետական պատվերի շրջանակներում բարձրագույն մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտներին պետական կառավարման մարմնի ղեկավարը շնորհում է «ոստիկանության լեյտենանտ» կոչում:»:

Հոդված 25. Օրենքի 60.8-րդ հոդվածի 4-րդ մասում «11-րդ հոդվածով» բառերից հետո լրացնել «(բացառությամբ տարիքային պահանջի)» բառերը:

Հոդված 26. Օրենքի 60.24-րդ հոդվածի՝

1. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Քաղաքացիական ծառայողի անձնական գործը և ծառայողական վկայականը»:

2. 3-րդ մասից հետո լրացնել հետևյալ խմբագրությամբ 4-րդ մաս.

«4. Քաղաքացիական ծառայողներին տրվում է ծառայողական վկայական, որի ձևը և տալու կարգը սահմանվում է պետական կառավարման մարմնի ղեկավարի նորմատիվ հրամանով:»:

Հոդված 27. Օրենքի 60.26-րդ հոդվածի 4-րդ մասում «վեց ամսից» բառերը փոխարինել «մեկ տարուց» բառերով:

Հոդված 28. Օրենքի 63-րդ հոդվածը ձանաչել ուժը կորցրած:

Հոդված 29. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

2. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից.

2) 2-րդ մասը մասնագիտական որակավորման մասով, բացառությամբ քննչական գլխավոր վարչության պաշտոնների, ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից.

3) 5-րդ և 6-րդ մասերն ուժի մեջ են մտնում 2013 թվականի հունվարի 1-ից.

4) 7-րդ մասի 1-ին կետն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի 8-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

5. Սույն օրենքի 16-րդ հոդվածով սահմանված փոփոխությունը չի տարածվում մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ոստիկանության ուսումնական հաստատությունում եռամսյա ուսումնական փորձաշրջան անցնող քաղաքացիների վրա:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ոստիկանության բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտած ոստիկանության ծառայողները օգտվում են «Ոստիկան-սպա», «Ոստիկանության բակալավր» և «Ոստիկանության մագիստրոս» որակավորմամբ մասնագիտական կրթություն ունեցող ոստիկանության ծառայողների համար սույն օրենքով նախատեսված պաշտոնի նշանակվելու իրավունքներից: Մինչև 2013 թվականի հունվարի 1-ը «Ոստիկան» որակավորմամբ մասնագիտական կրթություն ստացած քաղաքացիները համարվում են եռամսյա ուսումնական փորձաշրջան անցած:

7. Մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, նախքան ոստիկանությունում օրենքով սահմանված կարգով թափուր պաշտոնի նշանակվելը, ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցվում են նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, արդարադատության նախարարության պետական ծառայողները, դատախազները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից այլ պետական մարմիններում պաշտոնի նշանակված ոստիկանության նախկին ծառայողները:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԺ կողմից 2011թ. նոյեմբերի 29-ին առաջին ընթերցմամբ ընդունված «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը	Եզրակացություն
ՀՀ կառավարություն	Հոդված 7, մաս 7, կետ 1	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 14.1 հոդվածն իրավունք է վերապահում մրցույթին մասնակցելու նաև զինված ուժերի, ազգային անվտանգության, քրեակատարողական ծառայության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ծառայողներին, դատախազներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից պետական այլ մարմիններում պաշտոնի նշանակված ոստիկանության նախկին ծառայողներին, ինչպես նաև վերջին 5 տարիների ընթացքում ծառայությունից ազատված նախկին ծառայողներին, սակայն նախագծում օրենքի 14-րդ հոդվածով նախատեսվող մասնագիտական որակավորում չունեցող անձանց համար բացառություն նախատեսված չէ: Պատգամավոր Կորյուն Նահապետյանի առաջարկության հիման վրա անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նախագծի 7-րդ հոդվածում:	Առաջարկությունն ընդունվել է: Կետը խմբագրվել է:
	Հոդված 21, մաս 2	Առաջարկվում է նախագծում կատարել լրացում և ոստիկանության պետի խորհրդականի ու ոստիկանության պետի տեղակալի խորհրդականի պաշտոններ զբաղեցնող ծառայողների համար ոստիկանությունում ծառայության ժամկետ սահմանել մինչև 65 տարին լրանալը, քանի որ	Առաջարկությունն ընդունվել է:

		խորհրդականի պաշտոնում նշանակվում են ծառայության երկար տարիների փորձ և մասնագիտական հարուստ գիտելիքներ ունեցող անձինք:	
	Հոդված 22, մաս 2	Առաջարկվում է վեց ամսից ավելի ժամկետով ուսման գործուղված ծառայողների համար կադրերի գործող ռեզերվում գտնվելու ժամանակահատվածում պահպանել նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված դրամական բավարարումը:	Առաջարկությունն ընդունվել է:
	Հոդված 27	Առաջարկվում է քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի նշանակման համար սահմանված վաղեմության ժամկետը համապատասխանեցնել օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված ժամկետին:	Առաջարկությունն ընդունվել է: